ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ՋԻՎԱՆԻՆ ԵՒ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Ջիվանու սիրային, ժողովրդական թեմաների մշակմանը վերաբերող, ինչպես եւ ազգային-ազատագրական պայքարի ու 1905-1907 թթ. ինքնապաշտպանական մարտերին նվիրված ստեղծագործությունների կողքին որոշակի թիվ են կազմում հոգեւոր-եկեղեցական եւ խրատաբարոյական թեմաներով գրված ստեղծագործությունները: Ջիվանու կրոնաեկեղեցական այս գործերն իրենց հերթին բաժանվում են մի քանի խմբի:

ա. Հայոց Եկեղեցուն, հայոց սրբերին ու հայրապետներին նվիրված ստեղծագործություններ:

բ. Գավանական հանդուրժողականության, ինչպես նաեւ հայոց հավատն ու ավանդույթները եւ ծեսերը ամուր պահելուն նվիրված գործեր:

գ. Առ Աստված ուղղված, ինչպես նաեւ կրոնաբարոյական թեմաներով գրված բանաստեղծություններ:

Նման ստեղծագործություններին դիմելը պայմանավորված էր ոչ միայն Ջիվանու ներաշխարհով ու գրական նախասիրություններով, այլեւ նախորդող ողջ շրջանի հայ աշուղական բանաստեղծության ավանդներով:

Քամանչայով ու սազով, երգ ու խաղով ժողովրդին իր խոսքն ուղղելով՝ աշուղը ժողովրդի սրտին հարազատ թեմաներով ստեղծագործելով, միաժամանակ խրատում էր նրան: Այս հանգամանքը շեշտել են հայ աշուղական բանաստեղծության հետազոտողները: Գեռեւս Գ. Ախվերդյանը, որ սկզբնավորողն է Սայաթ Նովայի եւ, ըստ էության, աշուղական բանաստեղծության քնության եւ բնագրերի շրջանառության, գրում է. «Խրախճանում ուրախացրել են (աշուղները) ու տրտմութեան մէջ սուգ են արել ազգի հետ, ու ինչ տեղ վարդապետն պակասեցրել է քարոզն՝ սրանք անդադրիլ թէ սիրտը շահելով, թէ խրատով, թէ պարսաւելով կրթել են իրենց ժողովրդին»[1]:

Զարգացնելով Ախվերդյանի այս միտքը՝ Տրդատ եպս. Պալյանը գրում է. «Աշուղները, ժողովրդեան համար տեսակ մը քարոզիչ ալ եղած են: Ինչպէս հոգեւորականութիւնը, նոյնպէս Աշուղները, միշտ վառ պահած են ժողովրդեան սրտին մէջ, Քրիստոնէութեան, բարոյականի եւ ազնուութեան սէրը, ժողովրդի դաստիարակն եղած են իրենց խրատական, բարոյական, սրտագրաւ, սփոփիչ եւ իմաստալից բնական երգերով ու տաղերով»[2]:

Ավելի քան կես դար հայ աշուղական բանաստեղծության ուսումնասիրությամբ զբաղված Գարեգին Լեւոնյանը աշուղական արվեստին ու գրականությանը նվիրված

1 **Գ. Ախվերդյան**, Գուսանք, Սայաթ-Նովա, Մոսկվա, 1852, էջ ԺԶ.:
2 **Տրդատ եպս. Պալյան**, Հայ աշուղներ, հտ. Ա., Իզմիր, 1911, էջ 8:

իր գործերում շարունակ ընդգծել է, որ աշուղական բանաստեղծության անբաժանելի մասն են կրոնա-բարոյական թեմաներով ստեղծագործությունները: Լեռնյանը նշում է, որ աշուղները ոչ միայն հոգեւորականների նման քարոզել են, այլեւ ավելին, շատ հոգեւորականներ՝ պայմանավորված ժամանակի անբարենպաստ հանգամանքներով, իրենք են որպես աշուղ հանդես եկել եւ քարոզչի իրենց խոսքը որպես աշուղի խոսք ներկայացրել. «Ժողովրդի աչքում աշուղը դառնում է մի հեղինակավոր անձն, մի քարոզիչ ու նրա խոսքերը պատգամի տեղ է ընդունում, նրանից պատկառում: Պատմությունից գիտենք, որ մեր բարձրաստիճան հոգեւորականները, հայրենասեր եկեղեցականները, երբ ուզում էին տանջվող ու բռնաբարվող ժողովրդին մխիթարել, տիրող իշխանությունից, հեգեմոնությունից հեռու մնալու համար ծածուկ, թափառական աղքատ աշուղի կերպարանքով ման էին գալիս գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, համբերություն, հոգու արիություն, սրտերի միություն քարոզում, ճիշտ ինչպես եբրայական մարգարեները»[3]:

Աշուղ-հոգեւորական զուգահեռի մի արտահայտությունն են Լեռնյանի նաեւ հետեւյալ տողերը. «Պետք է ասել, որ լաւ աշուղները, որոնք հմուտ եւ բանիմաց մարդիկ են, մեզանում բաւականաչափ պատիւ են վայելում թէ բարձր դասակարգից, թէ հասարակութիւնից, մանաւանդ գիւղացիներից: Տեսնում ես գիւղացի աշուղը գիւղում մի տան մէջ նստած սեղանի գլխում, քահանայի հանդէպ երգում է»[4]:

Աշուղական գրականության մեջ, ինչպես նշում է Լեռնյանը, սիրո թեմայից հետո երկրորդ տեղն են գրավում կրոնաբարոյական բնույթի ստեղծագործությունները. «Քանակական տեսակետից սիրային երգերից հետո հին աշուղների մեջ խոշոր տեղ են գրավում կրոնաբարոյագիտական բովանդակություն ունեցող, ինչպես եւ խրատական ոտանավորները: Ասպվածաշնչի, հոգեւոր տաղերի ազդեցությունը դեռեւս մեծ էր ու շատ զգալի: Բիբլիական սյուժեներ՝ Ադամ, Եւա, Աղքատ Ղազար, Սողոմոն Իմաստուն, Հոբ Երանելի եւ նման ֆիգուրներ զարդարում էին աշուղական խաղերի գրեթե ամեն քառյակը ու երբ այդ խաղերի հեղինակները «աշխարհեմէն բեզարում» էին, քարոզում էին միջնադարյան միստիկ կրոնավորների պես քաշվել մի վանք, իրենց չգործած մեղքերը քավելու»[5]: Լեռնյանը ասվածի բնորոշ օրինակը համարում է Սայաթ-Նովային. «Նոր աշուղների նահապետը՝ Սայաթ-Նովան, դեռ կիսով չափ կրոնական էր. երգերի մեջ շարունակ պատահում են «այսմաւուրք», «հարանց վարք» եւ այլ բառերը: Կյանքի վերջում նա բոլորովին մոռացության տվեց «մէջլիսի զօզալները» եւ

Կու հագնիմ մազեղէն, կու հագնիմ շալրն
Կերթամ ու ման կուգամ վանքերն մէ մէկ, ասելով՝

Հաղպատի վանքում սկսեց որոնել յուր մխիթարությունը, աբեղա դարձավ, ուրիշին էլ խրատելով, որ «վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ»[6]:

Լեռնյանը կրոնական ոգու շեշտված արտահայտություններ է գտնում նաեւ Շիրի-

3 **Գ. Լեռնյան**, Հայ աշուղներ. «Ազգագրական հանդես», գիրք X, 1913, էջ 148-149:

4 **Գ. Լեռնյան**, Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1889, էջ 10:

5 **Գ. Լեռնյան**, Աշուղները եւ նրանց արվեստը, Երեւան, 1944, էջ 10: Հմմտ. Հայ աշուղներ. «Ազգագրական հանդես», գիրք X, էջ 130:

6 «Հայ աշուղներ». «Ազգագրական հանդես», գիրք X, էջ 130:

նի գործերում, իսկ նրա հեպեւորդներից Մալյուլի գրած 113 երգերի համար ասում է, թե դրանցից 105-ը կրոնական թեմաներով են եւ եթե «պապահում ենք մի սիրային երգի, այն էլ առանց կրոնականի չէ»[7]: Որպես բնորոշ օրինակ բերում է Մայլուլի հեպեւյալ տողերը.

Գովելի ես դու յորժամ, սիրուհի,
Քրիստոսն է քեզ բարեկամ, սիրուհի,
Արարեալ է Տէրը խնամ, սիրուհի...[8]:

Աշուղների կրոնասիրական եւ եկեղեցական կապվածության մի արտահայտությունն է եւ այն, որ դարեր շարունակ նրանք, այդ թվում եւ Սայաթ-Նովան, իրենց պահապան սուրբն էին համարում Սուրբ Կարապետին՝ Հովհաննես Մկրտչին, կամ ավելի ճիշտ վերջինիս ազգային-ժողովրդական յուրօրինակ մի արտահայտություն եղող Մշո համանուն վանքը, ինչպես ժողովուրդն էր ասում՝ Մշո Սուլթան Սուրբ Կարապետին, որի շնորհատու զորությունը ստանալու համար ուխտի էին գնում Վարդավառին: Ի դեպ, Սուրբ Կարապետը համարվում էր նաեւ լարախաղացների (փահլեւանների) պահապան սուրբը: Ծիրակից Մշո Ս. Կարապետ ուխտի գնացողների մասին Աղ. Մխիթարյանցը գրում է. «Ծատերը նպատակ են դնում գերեզմանի վրա խնդրել, որ իրենց «օխտը գոմեշի ուժ տա», - ոմանք լարախաղացություն են խնդրում, ոմանք սազ ածել ու բանաստեղծական տաղանդ, ոմանք իրենց ցավերին փարատություն, ոմանք էլ այլ եւ այլ շնորհներ»[9]:

Աշուղների՝ իրենց սազը Ս. Կարապետի շիրմին դնելով իրենց աշուղական շնորհը ստանալու մասին Վահան վրդ. Տեր-Մինասյանը գրում է. «Ո՞վ են սոքա, որ երամովին կը խայտան. ո՞վ են սոքա, որք Սուրբ Կարպետին եւ Վարդավառին այնքան փայլ, այնքան վեհութիւն կը ստեն. - Հայ աշուղներն են, որք իրենց սազերը Սուրբ Կարապետի վրայէն առնելով՝ շնորհք են առեր, աշուղի շնորհք են առեր: Սոքա գիւղէ ի գիւղ, հիւղէ ի հիւղ, քաղաքէ ի քաղաք կը մտնեն, սրտեր թունդ կը հանեն»[10]:

Գ. Լեւոնյանը որոշակի խմբավորմամբ ներկայացնելով այն թեմաները, որոնցով գրել են աշուղները, բոլոր այդ թեմաների ստեղծագործական բարձրակետը համարում էր Ջիվանուն, որ թե՛ այդ ամենը արտահայտել է գրական նոր հայերենով եւ թե՛ նոր շրջանի մարդուն բնորոշ մտածողությամբ, ինչպես նաեւ ներկայացրել ազգային վերիմասպավորմամբ ու ազգային ճակատագրի լույսի տակ: Աշուղական բանաստեղծության մեջ կրոնական թեմային Ջիվանու եւ իր հեպեւորդների նորովի դիմելու մասին Լեւոնյանը գրում է. «Նորագույն շրջանում էլ դեռ շատ կան կրոնական երգեր, թեեւ այժմ ավելի աղոթքներ են, մաղթանքներ են, քան զուտ աստվածաբանական բնավորության երգեր, բայց սրանք թողնելով «Հոբին, Հակոբին» հոգեւորը միացրել են ազգայինի հետ եւ կրոնական-բարոյականի ամենքից բարձր աղբյուրը ընտրել են Ավետարանը»[11]:

7 Անդ, էջ 130-131:

8 Անդ, էջ 130:

9 **Աղ. Մխիթարյանց**, Փշրանքներ Ծիրակի ամբարներից. «Էմինյան ազգագրական ժողովածու», հտ. Ա., Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 272:

10 **Վահան վրդ. Տեր-Մինասյան**, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, հտ. Բ., Կ. Պոլիս, 1904, էջ 149-150:

11 **Գ. Լեւոնյան**, Հայ աշուղներ. «Ազգագրական հանդես», գիրք X, էջ 131:

Ջիվանին եւս այն գիտակցությունն ունի, որ աշուղը քահանայի նման պիտի խրատի, ուսուցանի: «Զրպարտիչը» բանաստեղծության մեջ, քննադատելով նմաններին, ասում է՝ թող Տերը նրանց վերացնի մեր միջից: Զրպարտիչներին համեմատում է Հուդայի հետ, քանի որ զրպարտությունը մատնության մի տեսակ է, ընդ որում մատնություն՝ չգործած մեղքի համար, ինչպես որ Քրիստոս Հուդայից մատնվեց, եւ Տիրոջն ուղղված մեղադրանքները զրպարտություն էին: Կյանքը որդի նման ապականող զրպարտիչներին քննադատելով, Ջիվանին միաժամանակ նշում է, որ դա հենց քահանայի կատարելիք գործն է, որի խոսքն ավելի ազդու կլինի, քան իրենը.

Այդպիսյաց խրատ տալը քահանայից պարտքն է հատուկ,
Ի՞նչ կարող է բան շինել Ջիվանու պես խեղճ երգիչը[12]:

Ջիվանու կրոնաբարոյական թեմաներով գործերը կարելի է բաժանել հետեւյալ խմբերի.

1. Առ Աստված ուղղված աղոթքներ:
2. Բարոյախոսական բնույթի բանաստեղծություններ, որոնցում հորդորում է մեղք չգործել եւ հիշել Տիրոջ դատաստանը:
3. Կրոնական բնույթի ներանձնական խորհրդածություններ՝ դրված աշուղական բանաստեղծության ձեւի մեջ:
4. Ավետարանական թեմաներով բանաստեղծություններ:
5. Սուրբ Գրքի հետ տարված զուգահեռներ եւ համեմատություններ, որոնք կապված են կյանքի տարբեր երեւույթների հետ, այդ թվում եւ ազգային կյանքի՝ իր ապրած ժամանակի որոշակի նշանակալից իրադարձությունների հետ:

Առաջին խմբի բանաստեղծությունները, որոնց նվիրված է եւ մեր այս հոդվածը, նոր օրյա աղոթքներ են, որոնք այս գործերին բնորոշ ձեւով Աստծուն ուղղված խնդրանք-հայցեր են, որոնցում փառաբանվում է Տիրոջ զորությունը եւ անձնական ու անանձնական խնդրանքներ են ուղղվում: Ներանձնական խնդրանքներն իսկ Ջիվանին բարձրացնում է հասարակական հնչեղության աստիճանի՝ դրանց հաղորդելով ընդհանուր բարոյական եւ համամարդկային ուղղվածություն: Աշուղական բանաստեղծության մեջ, քանի որ վերջին տան տողերը տվյալ գործի բարոյական եզրահանգումն են, որն առաջին դեմքով ասվում է տվյալ աշուղի կողմից համապատասխան վերաբերմունքով եւ ընդհանրացումով, ուստի աղոթական նման բանաստեղծությունները կառուցվածքային առումով ունեն այն յուրահատկությունը, որ վերջին տողերում աշուղը ուղղակիորեն դիմում է Աստծուն, խնդրելով կատարել իր հայցածը եւ կամ դարձյալ առաջին դեմքով փառաբանում է Աստծուն:

Անհրաժեշտ է նշել, որ կրոնի, Աստծո վերաբերյալ երգերի ստեղծման խթանը Ջիվանու՝ ճշմարիտ քրիստոնյայի էությունն է, նրա պատկերացումները, հույսերի ու սպասումների գաղափարատիպը: Ջիվանին ընդունում է Աստծո գոյությունը՝ իբրեւ գերագույն, կատարյալ, ամոքիչ ու մխիթարիչ ամենակարող էակի: Միայն Աստված է ի զորու

12 «Ջիվանու քնարը», կազմեց Ա. Սահակյան, Երեւան, 1959, էջ 555:

բարեփոխել մարդու կյանքը, երջանկություն ու հաջողություն պարգևելու նրան, ազատելու մեղքերից, շնորհելու նրան հոգու խաղաղություն, սեր, հաշտեցնելու իր խղճի հետ:

Այդ առումով ուշագրավ է «Պաղատանք առ Աստված»[13] ստեղծագործությունը («Խնդրում եմ, Տե՛ր, քո սիրույդ մեջ...» սկզբնատողով): Աշուղը, թվում է, երկյուղ է ապրում առ Աստված ունեցած իր հավատի հաստատունության համար, ձաղկում է իրեն՝ չգործած ու գործած սխալների ու մեղքերի համար.

Խնդրում եմ, Տե՛ր, քո սիրուդ մեջ, խնդրում եմ հաստատե ինձ,
Այս թունալից, վշտաբեր դառ վերքերեն անջատե ինձ,
Ո՛վ գթառատ եւ ողորմած ամենակալ Տեր բարի,
Սիրելի որդվույդ սիրո մասին ցավից փարատե ինձ [14]**:**

Այս տողերը դարձյալ մեզ տանում են դեպի ակունքները, դեպի Նարեկացին:

Բացի քեզնեն փրկարար, վերքեր բուժող ոչ ոք չկա...
Կենսամաշ խղճի տված խթաններեն ազատե ինձ,
Դեպի երկնից գահերեն ուղարկե օգնություն մը, Տեր,
Քո ձեռագործն եմ ծառա անճարացյալ, նկատե ինձ [15]**:**

«Կենսամաշ խղճի տված խթաններեն ազատե» խոսքերով նկատի ունի սեփական մեղավորության գիտակցումից շարունակ տանջվելը, ուր կենսամաշ՝ կյանքը մաշող խղճի կողմից տրված խթանները՝ հարվածները գործված մեղքի համար ինքն իրեն ձաղկելն է, ուստի մեղքերին թողություն է խնդրում, որ ազատվի նրանց տանջող ցավերից:

Այս բանաստեղծության վերջին տողերում, որոնք խրատական եզրահանգում-ընդհանրացումն են, ասվում է.

Ըստ որում, պակասություն ունիմ, գիտեմ, խրատե ինձ,
Մտացս փոփոխություն տալով՝ նորոգե իմ հոգիս,
Սիրտը մաշված, հնացյալ Ջիվանին եմ, կարկատե ինձ :

Մեղքերի հնացյալությունից հոգեպես նորոգվելը, կարկատվելը Ջիվանին այս խնդրանքին համահունչ ձեւով արտահայտել է նոր գինին հին տիկերի մեջ չպահելու Հիսուսի խոսքերի հետեւողությամբ: Բանաստեղծական ազատ վերաշարադրանքում թեեւ բառային համընկնումներն այնքան էլ ցայտուն չեն, սակայն իմաստային հետեւողությունը պարզորոշ երեւում է կապված ավետարանական հետեւյալ տողերի հետ. «Եւ ոչ արկանեն գինին նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ տիկքն պատառին, եւ գինին հեղու եւ տիկքն կորնչին, այլ արկանեն գինի նոր ի տիկս նորս, եւ երկոքին պահին» (Մտթ. Թ. 17, Մրկ. Բ. 22, Ղուկ. Ե. 37):

Ծով են աշուղի մեղքերը, եւ մեծ հոգիներին հատուկ անզուսպ տենչանքով նա ձգտում է քավել, ազատվել դրանցից, հասնել ինքնակատարելության, հաշտության, համերաշ-

13 Տե՛ս «Աշուղ Ջիվանի», Անտիպ երգեր, աշխ.՝ Թ. Պողոսյանի, Երեւան, 2009, էջ 331:
14 Անդ:
15 Անդ:

խության իր եւ իր խղճի հետ: Եւ նա ուրիշ ելք չի գտնում. նրա որոնումները տանում են դեպի ամենաարդար, ամենակարող էակը՝ Աստծուն.

Աշուղը Աստծուն հաճախ է դիմում՝ խնդրելով, որ ազատի իրեն վերքերից, ցավերից ու հոգսերից.

Անկարեկից, ինձ աննպաստ աշխարից գանգատ ունիմ,
Դիզվել են սրտիս վրա՝ հոքսեր ու ցավեր շատ ունիմ,
Խղճի խայթեր, սուր ասեղներ մինչեւ հազար հատ ունիմ,
Զանազան, տեսակ-տեսակ ցավերու մեջը մատ ունիմ [16]**:**

Հաջորդ տան մեջ ստեղծում է իրեն դատողների եւ իր ճակատագիրը որոշողների բազմաստիճան մի համակարգ, ուր դատավորն Աստված է, «կենսատու Սուրբ Հոգին» իր գործերի քննիչը, փաստաբանը՝ այսինքն իր գործած մեղքերից իրեն պաշտպանող Փրկիչը, իսկ վկաներն են Դավիթ Սաղմոսերգուն եւ «Շնորհալի երգիչը»: Նրանց համարում է իր վկաները, որովհետեւ Դավիթ մարգարեն իր սաղմոսով եւ Ներսես Շնորհալին շարականով Ջիվանու նման դիմել են Տիրոջը՝ ներելու եւ թողություն շնորհելու իրենց մեղքերին: Հույսը կտրելով, որ երկրի վրա կարող է արդարություն գտնել, ապավինում է երկնային արդարությանը:

Ուղղակիորեն «Աղոթք» վերնագրված եւս երկու ստեղծագործություն ունի Ջիվանին: Դրանցից առաջինը, որը գրվել է 1900 թ., նա «կեսանկյալ աղաչում է», որ Աստված իրեն փրկի վատ հարեւանից եւ, ընդհանրապես, տարբեր տեսակի վատ մարդկանցից, որոնց համեմատում է Հուդայի հետ, ասելով, թե նրանք եւս մարդու համար մի աներեւույթ դարան են լարում: Այստեղ հին աղերսալից աղոթքների զգացողությունը ստեղծվում է «Կեսանկյալ աղաչում եմ» խոսքերով[17]: Հետաքրքիր է, որ Ջիվանին ասում է, թե կիսով չափ ընկած, կիսով չափ խոնարհված է աղոթում: Գրելիս, սովորաբար, ասում են գետնամած կամ դեմքով գետնին խոնարհված: Ջիվանին, սակայն, գրել է կեսանկյալ, որ միջանկյալ վիճակ է ներկայացնում, ըստ երեւույթին արտահայտելով իր իրական զգացողությունը եւ չի ցանկացել իրեն կեղծել՝ այլ պատկերներ ներկայացնելով:

Նույնանուն հաջորդ բանաստեղծությունը գրել է նախորդից երկու տարի անց: Այն սկսվում է Աստծուն տրված հետեւյալ բնորոշմամբ.

Միայն հզորներից հզոր, թաքավորաց թաքավոր Սուրբ,
Համայն ազգաց տիրապետող ահեղ, հուժկու ահավոր Սուրբ,
Տկարներու ապավենը, զորեղ ապաստանը Աստված,
Ուղարկե քու զորությունդ, ազատե ինձ, զորավոր սուրբ[18]**:**

Թագավոր, հզոր եւ սուրբ բառերի հաճախադեպ կրկնությունը այս չորս տողերում, ըստ երեւույթին պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Ջիվանին աստվածային փառաբանությունը ցանկացել է արտահայտել աստվածաշնչային «Տէր, Տէր զօրու-

16 Տես անդ, էջ 143:
17 «Ջիվանու քնարը», էջ 749:
18 «Աշուղ Ջիվանի», Անտիպ երգեր, էջ 460:

թեանց» խոսքերով եւ Հայոց եկեղեցում կատարվող «Երեքսրբյանի» միջոցով, որը ցույց է տալիս անցյալի գրական ժառանգությունը միահյուսելու վարպետությունը, ինչպես նաեւ նրա քաջածանոթությունը հայ եկեղեցական գրականությանը եւ ծեսին:

Աստծուն ուղղված եւս չորս աղոթք ունի Ջիվանին, որոնք թեեւ «Աղոթք» վերնագիրը չունեն, սակայն լիովին համապատասխանում են վերջինիս: Դպրահական չէ, որ նրանցից երեքում առաջին իսկ տողում գործածվում է «Խնդրում եմ» բայական ձեւը, որպես աղոթալից խնդրանք: Նրանցից առաջինն ունի «Մի՛ հանձնիր» վերնագիրը: Քերականորեն հրամայական եղանակով սկսվող, սակայն իմաստաբանորեն խնդրանք եւ աղերսանք պարունակող նման բայերով խոսքն սկսելը բնորոշ է միջնադարյան շատ աղոթքների: Վերնագրի հրամայական ձեւի մեջ դրված խնդրանքին առաջին տողի առաջին իսկ բառով արդեն հաջորդում է հենց խնդրանքը.

Խնդրում եմ, Տե՛ր Աստված, իմ դատաստանս
Անամոթ, անպիտան մարդուն մի՛ հանձնիր[19]**:**

Նույն այս խնդրանքով է ավարտվում եւ բանաստեղծությունը.

Տե՛ր, տուր կարողություն դիմանամ ցավին.
Ծովումն ալեկոծյալ դժբախտ իմ նավին
Ղեկը ամբարտավան մարդուն մի՛ հանձնիր:

Նույն միտքը բանաստեղծության վերջում Ջիվանին արտահայտել է հայ միջնադարյան բանաստեղծության եւ հատկապես շարականերգության մեջ ընդունված ավանդական պատկերների միջոցով:

Ծովն այստեղ մարդկային մեղքերով ալեծուփ աշխարհն է, նավը՝ մարդկային կյանքի ընթացքը, իսկ ղեկը պահող նավապետը՝ Քրիստոս, որ փրկության նավահանգիստ է առաջնորդում Իրեն ապավինողներին: Հիշենք Սահակ-Մեսրոպյան ապաշխարության շարականների «Ալիք յանցանաց զիս ալեկոծեն» տողը, ուր շարականագիրն ապավինում է բարի նավապետին:

Ջիվանին այստեղ նույն միտքը շեշտված է արտահայտել մյուս կողմից, թե՝ նավի ղեկը ամբարտավան մարդու չհանձնվի:

Բանաստեղծության վերջում նաեւ հայցում է, որ Տերը կարողություն տա դիմանալու ցավերին: Որպես աղոթք գրված մեկ այլ բանաստեղծության մեջ ասում է.

Տո՛ւր զորություն՝ մնամ քեզ հավատարիմ,
Ինձ չիսաբե չար բանսարկուն ոխերիմ [20]:

Այստեղ Ջիվանին, հավատարիմ ինքն իրեն, Աստծուն մեծարելով հանդերձ, պաղատում է նրան՝ չինայել իր սերն ու լույսը մարդուն եւ անսասան պահել նրա հավատարմությունը Աստծուն:

Աստծուն ուղղված տո՛ւր զորություն եւ տո՛ւր կարողություն խոսքերը, որոնք քանիցս

19 «Ջիվանու քնարը», Երեւան, 1959, էջ 748:
20 «Աշուղ Ջիվանի», Անտիպ երգեր, էջ 551:

կրկնվում են հատկապես այս վերջին բանաստեղծության մի քանի տներում, լինելով Ջիվանու հոգեվիճակի արտահայտությունը, միաժամանակ գալիս են «Սաղմոսաց գրքից», ուր Դավիթ մարգարեն է ասում. «Տո՛ւր զօրութիւն ծառայի Քո, կեցո՛ զորդի աղախնոյ Քո՛, եւ արա առ իս նշան բարութեան» (Սղմ. ԺԵ. 16): Բանաստեղծության մեջ այս միտքն արտահայտված է մի քանի անգամ: Ջիվանին Աստծուց նաեւ հայցում է .

Պահպանե՛ Հայ եկեղեցին ուղղափառ,
Դուն ես եղել հիմնադիրը կանխավաղ [21]:

Հաջորդ տան մեջ այնուհետեւ գրում է.

Տե՛ր, մի հարուցանիր մեզ վերա կրկին,
Անխիղճ անգութ մարդապտյացներ զոշաքաղ:

Ջիվանին այստեղ կատարել է անվրեպ բառընտրություն՝ իր ասելիքը հստակ ներկայացնելու համար: Զոշաքաղ բառի բացատրությունն ըստ «Հայկազյան բառարանի»՝ «Որ քաղէ ագահութեամբ զյոռի շահս»: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ այս բառը պարզապես չի նշանակում ագահությամբ, հոռի ձեւով իր շահին հետամուտ եղող: Այսպես են անվանվել եկեղեցու այդ կարգի սպասավորները: Նոր ձեւավորվող քրիստոնեական եկեղեցու սպասավորներին առաքյալները քանիցս զգուշացնում են հեռու մնալ ագահության այդ ախտից եւ սպասավորել անշահախնդիր ձեւով: Նման խրատ-հորդորները սկսվում էին «Մի՛...» արգելականով: Այս հարցում նախանձախնդիր էր հատկապես Պողոս առաքյալը: Տիտոսին ուղղված թղթում ասում է. «Մի՛ զօշաքաղ, այլ հիւրասէր, բարեսէր» (Տիտ. Ա. 8): Պետրոս առաքյալը եւս հրահանգում է . «Մի՛ զօշաքաղութեամբ...» (Ա. Պետ. Ե. 2):

Այսպիսով, Ջիվանին նուրբ ձեւով ասում է, որ Տերը Հայոց Եկեղեցին թող հեռու պահի զոշաքաղ հոգեւորականներից:

Այս խնդրանքը որպեսզի վիրավորական չլիներ եւ սխալ չընկալվեր՝ թե Ջիվանին այդպիսին է համարում հայ հոգեւորականներին, նա նախ շեշտում է Հայոց Եկեղեցու աստվածահաստատ լինելը եւ նոր է գրում Եկեղեցին զոշաքաղ հոգեւորականներից հեռու պահելու մասին:

Այս ստեղծագործության մեջ, որը մի շարք հարասացություններ ունի Սուրբ Գրքի հետ, Ջիվանին նաեւ խնդրում է.

Շնորհած աղբյուրեդ ինձ էլ տո՛ւր բաժին,
Չ'լինին խոսքերս անհամ, առանց աղ[22]:

Այս տողերը Ջիվանին գրել է Հիսուսի առաքյալներին՝ աղի մասին ասված խոսքերի հետեւողությամբ. «Բարւոք է աղ. Եւ եթէ աղն անհամեսցի, եւ համեմեսցի. արդ դուք կալարուք յանձինս ձեր զաղն. Եւ խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Մրկ. Թ. 49):

Այս շարքի վերջին աղոթքը ոչ միայն բովանդակությամբ, այլեւ ձեւով իսկ արդեն

21 Անդ, էջ 551:
22 Անդ, էջ 550:

անանձնական է: «Մեր ազգը» վերնագրված այս բանաստեղծությամբ Աստծուն է դիմում ժողովուրդը: Սաղմոսների, եգիպտական գերության հալածանքների, Հիսուսի՝ որպես որբերի եւ այրիների պաշտպանը լինելու գաղափարի հետեւողությամբ Ջիվանին գրում է.

Դուն ես որբոց եւ աղքատաց պաշտպանող,
Դուն ես ընկածների համար հոգ տանող,
Տե՛ր իմ, եղի՛ր ներկայիս էլ պաշտպանող,
Բավ է շրջի թափառական մեր ազգը[23]:

Այս բանաստեղծության մեջ նաեւ ասվում է.

Ամեն գաղտնիք քեզ հայտնի է, ո՛վ Աստված,
Ամեն մի սիրտ դու կտեսնես անկասկած:

Սույն տողերը գրվել են Դանիելի մարգարեության հետեւյալ խոսքերի հետեւողությամբ. «Աստուած յաւիտենական ծածկագէտ, որ գիտես զամենայն յառաջ, քան զլինելն նոցա» (Դան. ԺԴ. 42):

Բերված ստեղծագործությունները վկայում են Ջիվանու ոչ միայն ջերմ հավատի ու այն հայ հոգեւոր ավանդույթից բխեցնելու մասին, այլեւ Աստվածաշնչի քաջիմացության եւ վերջինիս տարբեր իմաստուն տողերը բանաստեղծական վարպետությամբ սեփական ստեղծագործություններին միահյուսելով՝ գրվող իր տողերին հոգեւոր մի նոր շունչ հաղորդելու՝ հեղինակի վարպետության մասին:

23 «Ջիվանու քնարը», էջ 239: